

### ՀԱՅԿ ՂՈՒԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

## ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻՋՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ

Հայաստանի և Ֆրանսիայի միջև համագործակցությունը կառուցված է իրավական հավասարության սկզբունքի վրա, որը կողմերին հնարավորություն է տալիս գործել ավելի վճռական՝ առանց միջազգային իրավաբաղադրական, հասարակական ու այլ բնույթի հնարավոր տարակարծությունների խիստ ազդեցության: Հոդվածում եզրահանգում է արվում, որ հայ-ֆրանսիական հարաբերությունների պայմանագրաիրավական բազան կայացած է, միջպառլամենտական բավականին ակտիվ հարաբերություններին զուգահեռ ստեղծվել են բոլոր պայմաններն ու հիմքերը երկկողմանի քաղաքական, առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության արդյունավետ զարգացման համար:

*Հիմնարարը - հայ-ֆրանսիական հարաբերություններ, փոխգործակցություն, միջպետական կապեր, իրավապայմանագրային հիմք, համաձայնագիր, խորհրդարան, պատվիրակություն, պաշտոնական այց, բանակցություններ, փոխպայմանավորվածություն:*

Ֆրանսիան պատկանում է այն երկրների շարքին, որոնք Հայաստանի հետ պահպանում են բազմակողմանի զարգացած բազմատարր կապեր՝ միաժամանակ հենվելով նաև մարդկային հարաբերությունների վրա: Իրավապայմանագրային հիմքերի վերլուծության համատեքստում հիշատակման են արժանի բազմաբնույթ մշակութային, մտավորական և գիտատեղեկատվական կապերը, ինտենսիվ գործակցությունը հայկական ու ֆրանսիական քաղաքների միջև, միջպառլամենտական հարաբերությունների զարգացումները:

Հաշվի առնելով Ֆրանսիայի դերակատարությունը եվրոպական ու համաշխարհային բազմապիսի գործընթացներում, նաև որ Ֆրանսիան հանդիսանում է ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահող երկիր, անհրաժեշտ է մշտապես այդ երկրի հետ պահպանել զարգացող հարաբերություններ և ձգտել մշակել նոր երկխոսությունների օրակարգ: Այդ խնդրի լուծմանը նշանակալի չափով նպաստում են Հայաստանի ու Ֆրանսիայի ղեկավարների բարձրագույն մակարդակներում անմիջական երկխոսությունները, ինչի շնորհիվ հնարավորություններ են ընձեռնում ոչ միայն զարգացնել երկկողմանի հարաբերությունները, այլև բարելավել համագործակցությունը միջազգային կառույցների շրջանակներում:

Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը (Ֆրանսիա կատարած պաշտոնական այցի ժամանակ) Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ֆ.Միտերանի հետ 1993թ. մարտի 13-ին Փարիզում ստորագրեցին «Ֆրանսիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության և համագործակցության համաձայնության մասին պայմանագիր»՝ 10 տարի ժամկետով: Ըստ էության,

պայմանագրի ստորագրումը իրականացվեց դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ընդամենը 1 տարի հետո, ինչը վկայում է այն նշանակության մասին, որ Ֆրանսիան տալիս էր Հայաստանի հետ հարաբերությունների հաստատմանն ու զարգացմանը:

1993թ. սեպտեմբերի 27-ին ՀՀ Գերագույն Խորհուրդը վավերացրեց պայմանագիրը, 1994թ. հունիսի 20-ին՝ Ֆրանսիայի պառլամենտը, իսկ հոկտեմբերի 14-ին՝ Սենատը: Պայմանագիրը ուժի մեջ մտավ 1995թ. մայիսին: Պայմանագրի եզրափակիչ դրույթների համաձայն՝ այն պետք է երկարացվեր յուրաքնչյուր 5 տարին մեկ, եթե կողմերը ժամկետի ավարտից մեկ տարի առաջ միմյանց չեն նախագուշացնում պայմանագիրը դադարեցնելու վերաբերյալ: Նշված պայմանագրի կարևորությունն ընդգծվում է նրանով, որ որոշ հոդվածներ ունեն առանձնացված նշանակություն: Մասնավորապես, համաձայն 19-րդ հոդվածի՝ պայմանագրի կետերը ուղղված չեն ընդդեմ երրորդ երկրների հետ հարաբերությունների պարտավորություններին և ուղղորդված չեն այդ երկրներից ինչ-որ մեկի դեմ: Այդ կետը վկայում է երկկողմանի մտադրությունների մասին՝ չհակադրվել այլ պետությունների հետ հարաբերությունների ձևավորմանը:

Պայմանագրի 2-րդ հոդվածը նախատեսել է կողմերի համագործակցություն «մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և խրախուսման, մասնավորապես միջազգային հեղինակավոր կազմակերպությունների շրջանակներում», ինչպես նաև ջանքերի միավորմամբ «միջազգային անվտանգության ոլորտում համագործակցության նպատակով հակամարտությունների դադարեցման և պետությունների միջև հարաբերություններում միջազգային իրավունքի

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նորմերի հանդեպ հարգանքի դրսևորմանը»: Իսկ 5-րդ հոդվածում նշվել է, որ «Ֆրանսիական Հանրապետությունը պարտավորվում է սատարել կապերը Հայաստանի Հանրապետության և Եվրոմիության միջև»: Փաստորեն, պայմանագրի այս դրույթներով հիմք է ստեղծվում, որ Ֆրանսիան կարողանա դառնալ կապող օղակ Հայաստանի և Եվրոպական կառույցների միջև: Որոշ դրույթներ վերաբերում են նաև «Ֆրանսիայի աջակցությանը այն նորմերի ընդունմանը, որոնք նպաստում են հակամարտությունների դադարեցմանը ԵԱՀԿ-ի շրջանակներում»:

1993թ. Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության միջև ստորագրված պայմանագրի 15-րդ հոդվածը հետագայում գտավ իր գործնական կիրառությանը՝ «ողջունելով ապակենտրոնացված համագործակցությունը, մասնավորապես, տեղական վարչական մարմինների (օրինակ մայր-քաղաքների) միջև կապերը, պահպանել սահմանված պայմանագրային նպատակները»:

Հայ-ֆրանսիական իրավաքաղաքական հարաբերությունների սկզբնավորումն ընդգրկում է նաև միջպառլամենտական համագործակցությունը: 1990թ. սեպտեմբերին Ֆրանսիայի Ազգային ժողովում ստեղծվեց «Ֆրանսիա-Հայաստան» խումբը, որը պետք է ուսումնասիրեր երկկողմանի համագործակցության հնարավորությունները: Այդ փաստը խոսում է պառլամենտական իշխանությունների և պատգամավորների շահագրգռվածության մասին: Խմբի մեջ հիմնականում ընդգրկեցին պատգամավորներ Ֆրանսիայի այն տարածաշրջաններից, որոնցում բնակվում են առավել մեծ թվով հայեր: Խմբի նախագահ դարձավ սոցիալիստ Միշել Սեպանը: Երկու երկրներում ստեղծված խմբերը մեծ կարևորություն էին տալիս օրենքների մշակմանը և ընդունմանը: Հասկանալի է, որ ֆրանսիական փորձագետները կարող էին իրենց ներդրումը կատարել Հայաստանի՝ Եվրոպական նորմերին համապատասխան օրենսդրության գործընթացի իրականացման գործընթացում, ինչը նախատեսված էր գործընկերության և համագործակցության համաձայնագրում:

Համաձայնագրում նախատեսվում էր ստեղծել «Հայաստան-Ֆրանսիա քաղաքական և օրենսդրական հարցերով խորհրդատվական կենտրոն», քանզի այդ փուլում մեծ աշխատանք էր կատարվել օրենսդրական ներդաշնակեցման գործում: Ֆրանսիական գործընկերները մասնակցեցին ոչ սովորական գործընթացին՝ Հայաստանի Սահմանադրության մշակմանը: 1995թ. ընդունված ՀՀ Սահմանադրությունը ուներ շատ ընդհանրություններ Ֆրանսիայի Սահմանադրության հետ, և նույնիսկ հնչում էին մեղադրանքներ այդ իրավական փաստաթուղթը մշակողների հասցեին, թե իբր «ֆիլված

է» ֆրանսիական տարբերակից:

Ֆրանսիայի Ազգային ժողովի մի քանի պատգամավորներ, ներառյալ Ռիշար Կազանովը, Ֆրանսուա Ռոշբուլանը և Պատրիկ Դեհյանը, 1990թ. վերջին ժամանեցին Հայաստան և հանդիպում ունեցան Գերագույն Խորհրդում: Այդ հանդիպումը հիմնականում կրում էր ճանաչողական բնույթ, որի ընթացքում քննարկվեցին նաև Հայաստանին օգնություն տրամադրելու մի շարք հարցեր:

1993թ. պառլամենտական ընտրություններից հետո Ֆրանսիայում ստեղծվեց պատգամավորների նոր խումբ՝ 56 պատգամավորների կազմով, որոնցից 29-ը ներկայացնում էին Union pour la Democratie Française (UDF) աջ կուսակցությունը (նախագահ՝ Վ. Ժիսկար դը Էստեն), 20-ը՝ Rassemblement pour la Republique (RPR) (նախագահ՝ Ժակ Շիրակ), 4-ը՝ սոցիալիստներ, 2-ը՝ կոմունիստներ և մեկը՝ Միշել Նատրը, անկախ պատգամավոր: Խորհրդի նախագահն էր Ֆրանսուա Ռոշբուլան (UDF):

Ֆրանսիայի ԱԺ պատգամավորական խումբը՝ Ռոշբուլանի գլխավորությամբ, որը բազմիցս եղել էր Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, 1994թ. սեպտեմբերին ժամանեց Հայաստան: Պատգամավորների խմբում էին նաև Գի Տեյեն (UDF), Դիդյո Միգոն (սոցիալիստ), Բերնար Սոմեն (UDF) և Բերնար Լեվիան (RPR)<sup>3</sup>:

1994 թ. հունվարի 27-ին ներքին գործերի և տարածքային կառավարման պետնախարար Ռաուլ Պասկուան հրատարակեց նոր օրենք (Պասկուայի օրենք) վիզաների մասին, որը հիմնականում վերաբերում էր այն անձանց կարգավիճակին, ովքեր ժամանում են Ֆրանսիա կամ մեկնում են Ֆրանսիայից: Այդ օրենքն ուժի մեջ մտավ 1994թ. ապրիլի 1-ից և կոչված էր երաշխավորել պետության ազգային անվտանգությունը: Տվյալ օրենքը վերաբերում էր հետևյալ երկրների՝ Աֆղանստանի, Ադրբեջանի, Կորեայի, Վրաստանի, Իրաքի, Իրանի, Հայաստանի, Հորդանանի, Լիբիայի, Լիբանանի, Սիրիայի, Սուդանի և Յեմենի քաղաքացիների կողմից Ֆրանսիա այցելությունների կանոնակարգմանը: Օրենքը տարածվում էր նաև փախստականների, միգրանտների վրա, որոնք չունեին անձնագիր (apatride):

1994թ. փետրվարի 13-ին Ֆրանսիայի վարչապետ Էդուարդ Բալանդյուրը, ելույթ ունենալով հեռուստատեսությամբ, նշեց. «Ես գտնում եմ նորմալ, որ ահաբեկչության կանխարգելման համար կիրառվել են բոլոր անհրաժեշտ միջոցները: Ահաբեկչության դեմ պայքարը Ֆրանսիային ստիպում է օտարերկրացիներից պահանջել իշխանությանը տեղյակ պահել երկիրը լքելու իրենց մտադրության մասին»: Օրենքը հնարավորություն տվեց ստանալ համապատասխան վիճակագրական տվյալներ օտարերկրացիների տեղաշարժերի վերաբերյալ:

Պետնախարարի տեղակալ Միշել Մեփանը ընդգծեց, որ դա գուտ ձևական միջոցառում է և ոչ մի դեպքում չպետք է անհանգստացնի այն քաղաքացիներին, որոնք չեն գործել իրավախախտումներ. նման անձինք առանց որևէ բարդության կատանան վիզաներ երեք ամիս ժամկետով :

1996թ. մարտի 26-ին պաշտոնական այցով Փարիզում գտնվող ՀՀ վարչապետ Հ.Բագրատյանը հանդիպեց վարչապետ Ալեն Շյուպպեի հետ: Հանդիպման ընթացքում առաջարկվեց վերանայել Պասկուայի օրենքը Հայաստանի քաղաքացիների հանդեպ: Ա. Շյուպպեն ընդգծեց, որ դա բարդ հարց է, քանի որ այն կապված է ոչ միայն Հայաստանի, այլ նաև Վրաստանի, Ադրբեջանի և մյուս նմանատիպ կարգավիճակ ունեցող երկրների հետ: ՀՀ քաղաքացիների համար առանձնացված ընթացակարգով վիզաներ տրամադրելու հարցերով զբաղվել է նաև 1995-1997թթ. Ֆրանսիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վիգեն Չիբեչյանը :

Կարևոր էր նաև Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության պատվիրակության (գլխավոր քարտուղար Դյուֆուրկոմի գլխավորությամբ) 1995թ. հունվարի 27-29-ին Հայաստան կատարած այցը: Այդ օրերին տեղի ունեցան հանդիպումներ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի, ԳԽ նախագահ Բ. Արաքցյանի, վարչապետ Հ. Բագրատյանի, արտգործնախարար Վ. Փափազյանի և պաշտոնարար այլ անձանց հետ: Օրակարգում եղել են երկկողմանի շահագրգիռ հարցեր, ինչպես նաև ԵՄ-ի հետ համագործակցության տեսլականը:

Առավել արդյունավետ էին բանակցությունները երկու երկրների ներքին գործերի նախարարների միջև, որի արդյունքներից հանդիսացավ 1995թ. մարտի 12-ին կնքված համաձայնագիրը Հայաստանի և Ֆրանսիայի համապատասխան գերատեսչությունների միջև համագործակցության մասին: Հարկ է նշել, որ ՀՀ ՆԳՆ-ի և Ֆրանսիայի ՆԳՆ-ի միջև համագործակցությունն իրականացվել է դեռևս 1993թ.-ից այն ոլորտներում, որոնք հետագայում ամրագրվեցին նշված համաձայնագրով՝ պայքար ահաբեկչության դեմ, քմրադեղերի և հոգեմետ միջոցների անօրինական շրջանառություն, փողերի լվացում և կեղծում, օդակայանների անվտանգության ապահովում և այլն :

Հայ-ֆրանսիական պաշտամենտական համագործակցության խթանմանը նպաստել են օրենսդիր իշխանությունների ղեկավարների փոխադարձ այցերը: 1993թ. մարտի 30-ից ապրիլի 3-ը Ֆրանսիա է այցելել ՀՀ ԱԺ նախագահ Խոսրով Հարությունյանը, 2004թ. հունվարի 12-19-ը՝ Արթուր Բաղդասարյանը:

ՀՀ ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանի հրավերով 1999թ. հուլիսի 20-ին պաշտոնական այցով Երևան ժամանեց Ֆրանսիայի Սենատի պատվիրակությունը՝ նախագահ Կ. Պոնսլեի ղեկավարու-

թյամբ<sup>7</sup>: Վերջինիս նախաձեռնությամբ 1999թ. դեկտեմբերի 14-16-ը Վերսալում տեղի ունեցավ Հարավային Կովկասի երեք հանրապետությունների խորհրդարանականների հանդիպում: Հանդիպումը նվիրված էր Հարակովկասյան տարածաշրջանում համագործակցության ակտիվացմանը: Հայ-ֆրանսիական այցերը բարձրաստիճան միջպետական մակարդակով վկայում են երկկողմանի շահերի առկայության մասին:

1999թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ Ազգային Ժողովում իրականացվեց ահաբեկչություն, որին զոհ գնացին ՀՀ վարչապետը, ՀՀ ԱԺ նախագահը և ևս վեց քաղաքական գործիչներ: Ֆրանսիական իշխանությունները, բարձրագույն իշխանության շրջանակները և բնակչության տարբեր շերտերը անմիջապես արձագանքեցին այդ ողբերգությանը՝ ցավակցություն հայտնելով և սատարելով Հայաստանին: Նույն օրը Ֆրանսիայի Ազգային ժողովը ի նշան հարգանքի ողբերգության զոհերին դադարեցրեց աշխատանքները: Հաջորդ օրերին Հայաստանի ղեկավարությանը և հայ ժողովրդին կոչով հանդես եկան նախագահ Ժ.Շիրակը, վարչապետ Լ.Ժոսպենը, Սենատի նախագահ Կ.Պոնսլեն, ԱԺ նախագահ Լ.Ֆաբիասը, արտգործնախարար Յու. Վեդրինը:

Նույն թվականի նոյեմբերի 2-ին Ֆրանսիայի սենատի նախագահ Կ. Պոնսլեն այցելեց ՀՀ դեսպանատուն, որպեսզի իր ցավակցությունը հայտնի դեսպան Է. Նալբանդյանին՝ վերջինիս հրավիրելով Ֆրանսիայի Սենատ, որի նիստը սկսվեց ՀՀ ԱԺ-ում ողբերգական զոհերի հիշատակին նվիրված մեկ րոպե լուծությամբ: Նիստի սկզբում Կ. Պոնսլեն իր հավատարմությունը հայտնեց ՀՀ նախագահին: Ողբերգության զոհերի հուղարկավորությանը մասնակցելու նպատակով Հայաստան մեկնեց պատվիրակություն՝ նախագահ Ժ. Շիրակի խորհրդական Լապուժան, Սենատի ներկայացուցիչներ, ԱԺ-ի և ԱԳՆ-ի ներկայացուցիչներ:

ՀՀ դեսպանատունը ցավակցական հեռագրեր ստացավ Եվրոխորհրդարանից, Եվրոպայի խորհրդից, ЮНЕСКО-ի նախագահից, ֆրանսիական մի շարք քաղաքների քաղաքապետներից, սենատորներից, պատգամավորներից, պետական և հասարակական կազմակերպություններից, բազմաթիվ հասարակական գործիչների և այլ շատ անձանց կողմից:

Ֆրանսիական բոլոր ՁԼՄ-ները լայնորեն լուսաբանեցին Հայաստանի ողբերգական իրադարձությունները: Հատկապես ակտիվ էին «Ֆրանս-Պրես» գործակալությունը, Ֆրանս-1,2,3, և «ՅոնԿուԱս» հեռուստատեսիվները, «Ֆրանս ինտերնացիոնալ», «Ֆրանս ինֆո» ռադիոկայանները, «Մոնդո», «Ֆիգարո» և «Լիբերասյոն» թերթերը: Չանգվածային տեղեկատվության բոլոր միջոցներ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րը, պարբերաբար լուսաբանելով իրադարձությունները, հիմնականում տեղեկատվությունը ներկայցնում էին սեփական թղթակիցների միջոցով:

Ֆրանսիական մամուլը, ներկայացնելով փաստացի տեղեկատվությունը, հանդես էր գալիս նաև մեկնաբանություններով՝ փորձելով բացատրել հանցագործության ներքին և արտաքին շարժառիթները: Արտաքին ազդակներից նշվում էր «գերտերությունների տնտեսական և քաղաքական շահերի բախումը տարածաշրջանում, հատկապես ռուս-ամերիկայի շահերը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում և Ռուսաստանի Հարավկովկասյան քաղաքականության ակտիվությունը»: Ներքին շարժառիթներից նշվում էին Հայաստանի ծանր սոցիալ-տնտեսական վիճակը, ներքին քաղաքական հակասությունները, որոնց մեջ՝ թվացյալ պայքարը «հայաստանյան և դարաբաղյան» թևերի իշխանությունների միջև տնտեսական շահերի հողի վրա և դրանց բախումները:

1999թ. հոկտեմբերի 27-ի դեպքերի պատճառով հետաձգվեցին նոյեմբերի սկզբի համար նախապես պլանավորված Ֆրանսիա-Հայաստան ԱԺ պատգամավորական խմբի պատվիրակության և ֆրանսիական մի շարք ձեռներեցների այցերը Հայաստան: Թեև Ֆրանսիայի պետական ու քաղաքական շրջանակներում Հայաստանի իրավիճակը շատ չդրամատիզացվեց, այդուհանդերձ, կատարվածը Հայաստանի հեղինակության վրա բացասական խիստ ազդեցություն թողեց: Հարվածը շատ ծանր էր, քանի որ որոշակի չափով հարցականի տակ դրվեցին Հայաստանում կայունության և ժողովրդավարացման գործընթացի հարցերը: Այս պարագայում արտասահմանում ձեռք բերած վստահությունն այդ հարցերում ստեղծեցին անբարենպաստ մթնոլորտ Հայաստանի արտաքին քաղաքականության վարման համար: Մեկ տարի հետո ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը Ստրասբուրգում նշեց, որ «այդ ողբերգական իրադարձությունները իրականում Հայաստանի համար ծանր ժամանակներ էին, որովհետև քաղաքական համակարգի կազմակերպվածքը ամբողջովին փոխվեց և խեղաթյուրվեց»:

Այդ տարիների հայ-ֆրանսիական գործակցության ակտիվ քաղաքականությունը տվեց իր արդյունքները՝ 1998թ. մայիսի 29-ին Ֆրանսիայի Ազգային ժողովն ընդունեց օրենք 1915թ. հայոց ցեղասպանության հրապարակային ճանաչման մասին<sup>10</sup>: Օրենքի նախագիծը ներկայացվել էր Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության կողմից և բխում էր վարչապետ Լեյոնել Ժոսպենի նախընտրական խոստումներից: Ֆրանսիան դարձավ աշխարհում առաջին երկիրը, որն ընդունեց հայոց ցեղասպանությունը օրենքի մակարդակով:

Հարկ է նշել, որ նախնական փուլում առկա էին

որոշակի բարդություններ, որոնք պայմանավորված էին գործադիր իշխանությունների և Ֆրանսիայի նախագահի դիրքորոշումներով: Գործադիր իշխանությունները հիմնավորում էին դա մի կողմից այն բացասական ազդեցությունով, որ ցեղասպանության ճանաչումը կարող է բերել Թուրքիայի հետ հարաբերությունների վատացմանը, իսկ մյուս կողմից՝ Ֆրանսիան հանդիսանում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող և պետք է խուսափի տարածաշրջանում կողմնակալ դիրքորոշումներից:

Դրանից հետո, երբ Մեմատում օրենքը օրակարգ մտնելուց հետո երկու անգամ հավանության չարժանացավ (2000թ. փետրվարի 2-ին և մարտի 24-ին), հունվարի 18-ին հաստատվեց Ազգային ժողովի կողմից, իսկ մի քանի օր հետո ստորագրվեց նախագահ Ժ.Շիրակի կողմից<sup>11</sup>: Սակայն, չնայած դրան՝ մեկ տարի հետո Ֆրանսիայի և Թուրքիայի միջև տնտեսական հարաբերություններում գրանցվեց զգալի աճ:

Ժակ Շիրակի՝ Ռ. Քոչարյանին գրած նամակից հետո Ֆրանսիայի համանախագահները ընդգծեցին, որ «փուլային կարգավորման տարբերակը սպառել է իրեն, անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր կողմերի տեսակետները»: Առավել ևս Ֆրանսիայի ԱԺ-ի կողմից հայոց ցեղասպանության ճանաչումը բացասականորեն ընդունվեց Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության մի շարք պաշտոնատար անձանց կողմից, որոնք մեղադրում էին Հայաստանին ֆրանսիական գործիչների վրա ճշում գործադրելու մեջ: Գործադիր իշխանությունը դժվար տարավ իր պարտությունը, քանի որ ԱԺ-ում քվեարկությունն անցավ միաձայն:

2001թ. սեպտեմբերի 20-24-ին, Ֆրանսիայի և Հայաստանի միջպառլամենտական համագործակցության շրջանակներում, Հայաստանի՝ քրիստոնեության պետական կրոնի ընդունման 1700-ամյակի տոնակատարությանը մասնակցելու նպատակով Հայաստան ժամանեց հայ-ֆրանսիական բարեկամության խմբի ղեկավար Ժակ Մոնը: Նրան ուղեկցում էին սենատոր Էլեն Լյուկը և Մեմատի վարչակազմի ղեկավար Վերոնի Բյոկեն<sup>12</sup>: 2002թ. հունվարին ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան նշանակվեց Անրի Կյունին:

2007թ. սեպտեմբերի 6-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանն ընդունեց Ֆրանսիայի Սոցիալիստական կուսակցության առաջին քարտուղար Ֆ. Օլանդի ղեկավարությամբ պատվիրակությանը (Ռենի, Ռոկե, Բրունո Լե Ռոն, Քարիմ Պոկզալ, արևմտա-եվրոպական կոմիտեի անդամներ Մուրադ Փափազյան և Ռիշար Անանյան), որոնք ժամանել էին Հայաստան ճանաչողական այցով: Քննարկվեցին հայ-ֆրանսիական համագործակցության հարցեր: Նախագահ Քոչարյանը ողջունեց նաև հայկական և ֆրանսիական քաղաքական ուժերի միջև կապերի հաստատումը ի դեմս Հայ հե-

ղափոխական դաշնակցություն և Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցություններին:

Այդ ժամանակ քննարկվեցին սոցիալիստական կուսակցության և անձամբ Ֆ. Օլանդի մասնակցությամբ Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից այնպիսի օրենքի ընդունումը, որը կսահմաներ քրեական պատասխանատվություն հայոց ցեղասպանության ժխտման դեպքում: Այստեղ հարկ է մանրամասնել, որ 2001 թվականի հունվարի 29-ին Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը ստորագրեց Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրենքը: Մինչ այդ Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատը՝ Ազգային ժողովը, 2001 թվականի հունվարի 18-ին միաձայն ընդունել էր օրինագիծը: 2006 թվականին անհաջող փորձ եղավ՝ պատիժ սահմանելու Հայոց ցեղասպանության փաստը հերքողների համար: Թեև Ֆրանսիայի Ազգային ժողովն ընդունեց օրինագիծը, սակայն ֆրանսիական կառավարության ջանքերով օրինագծի հետագա ընդունումը կանխվեց թուրքական կողմի ճնշումների հետևանքով:

2011թ. վերջին՝ Ֆրանսիայի նախագահական ընտրություններին ընդառաջ, Ֆրանսիայի իշխող «Միություն հանուն ժողովրդական շարժման» կուսակցությունը (UMP) գործող նախագահ Նիկոլա Սարկոզիի գլխավորությամբ նախաձեռնեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի ընդունումը: 2011թ. դեկտեմբերի 22-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում ընդունվեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը<sup>14</sup> (Օրինագիծը վերաբերում է Ֆրանսիայի կողմից ճանաչված ցեղասպանությունների ժխտման քրեականացմանը: Ֆրանսիան ճանաչել է նաև հրեաների ցեղասպանությունը. Հոլոքոստի ժխտումը վաղուց քրեականացված է Ֆրանսիայում): Հայոց ցեղասպանության ժխտման հետ կապված օրինագիծը խորհրդարան էր մտցրել «Միություն հանուն ժողովրդական շարժման» կուսակցության անդամ, պատգամավոր Վալերի Բուայեն: Հայոց ցեղասպանությունը ժխտողների համար օրինագիծը նախատեսում էր 1 տարվա ազատազրկում և 45.000 եվրո տուգանք<sup>15</sup>:

Ազգային ժողովում ընդունվելուց հետո համաձայն կարգի՝ այն քննարկվեց նաև Ֆրանսիայի խորհրդարանի վերին պալատում՝ Սենատում: 2012թ. հունվարի 23-ին Ֆրանսիայի Սենատում 127 կողմ և 86 դեմ հարաբերակցությամբ օրենքը նույնպես ընդունվեց: Սենատի կողմից ընդունվելուց հետո օրենքն ուժի մեջ էր մտնելու Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի կողմից հաստատվելուց հետո: Օրինագծի ընդունումից մի քանի օր անց մի խումբ ֆրանսիացի (շուրջ 60) սենատորներ բողոքարկեցին այն Սահմանադրական խորհրդում: Սահմանադրական խորհուրդը Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը

«հակասահմանադրական» ճանաչեց, ինչից հետո այն դուրս մնաց հետագա կիրառումից և օրենքի ուժ չստացավ:

Թեև Սարկոզին խոստացավ վերընտրվելու դեպքում ևս մեկ նման օրինագիծ անցկացնել ֆրանսիական խորհրդարանում<sup>16</sup>, սակայն 2012 թվականի մայիսին նա նախագահական ընտրությունները տանուլ տվեց սոցիալիստ Ֆրանսուա Օլանդին<sup>17</sup>: Սարկոզիի պաշտոնավարման տարիներին գլխավոր ընդդիմադիր ուժ հանդիսացած Սոցիալիստական կուսակցությունը նույնպես վարում էր Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծին աջակցող քաղաքականություն, սակայն Օլանդի նախագահության շրջանում (2012 մայիս ամսից) դեռևս որևէ օրենսդրական տեղաշարժ այս հարցում չի արձանագրվել:

Վերլուծության արդյունքների ամփոփմամբ հարկ է փաստել, որ Հայաստանի ու Ֆրանսիայի միջև ձևավորված բարիդրացիական գործակցությունը ունի իրավապայմանագրային կայուն հիմք, ինչն էլ իր հերթին վկայում է երկկողմ հարաբերությունների ռազմավարական նշանակության մասին: Նշանակալի է, որ հայ-ֆրանսիական հարաբերությունները շարունակում են զարգանալ համակարգված ու փոխշահավետ երկկողմանի դիրքորոշմամբ: Բացի միջպառլամենտական զարգացող կապերից՝ արձանագրվում են նշանակալի նվաճումներ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ամենաբարձր մակարդակով քաղաքական համագործակցությունը, տնտեսական կապերի զարգացումը, համագործակցությունը գիտակրթական, մշակութային և այլ ոլորտներում:

- <sup>1</sup> Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական արխիվ, ց. 5, գ. 22, ք. 73-85:
- <sup>2</sup> Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական արխիվ, ց. 5, գ. 22, ք. 46:
- <sup>3</sup> Տե՛ս France-Arme'nie, N 342 du 16 au 30 juin 2009. P. 12.
- <sup>4</sup> Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական արխիվ, ց. 2, գ. 38, ք. 56:
- <sup>5</sup> Տե՛ս France-Arme'nie, N 342 du 16 au 30 juin 2009. P. 13.
- <sup>6</sup> Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական արխիվ, ց. 9, գ. 47, ք. 2, 72:
- <sup>7</sup> Տե՛ս La France et l'Arme'nie, Relations politiques: <http://www.diplomatic.gouv.fr/fr/pays-zones-geo/833/armenie456/france-armenie1020/presentation4410/index.html#so1>
- <sup>8</sup> Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական արխիվ, ց. 5, գ. 22, ք. 262-263:
- <sup>9</sup> Տե՛ս Осканиян В. Неоконченное десятилетие. Ереван, 2009. С. 468.
- <sup>10</sup> Տե՛ս Hovhannisyann Nikolay. The Armenian Genocide. Yerevan, 2002. P. 570.
- <sup>11</sup> Տե՛ս Абраамьян Грант. История армянского народа (с древнейших времен до наших дней). Ер., 2004. С. 570.
- <sup>12</sup> Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական արխիվ, ց. 5, գ. 22, ք. 79, 143:
- <sup>13</sup> Տե՛ս Nicolas Sarkozy orders new Armenian genocide law <http://www.telegraph.co.uk/news/worldnews/europe/armenia/9112129/Nicolas-Sarkozy-orders-new-Armenian-genocide-law>
- <sup>14</sup> Տե՛ս French National Assembly passes Armenian genocide bill // [www.cnn.com/2011/12/22/world/europe/france-armenia-genocide/index](http://www.cnn.com/2011/12/22/world/europe/france-armenia-genocide/index)
- <sup>15</sup> Տե՛ս French Senate Passes Bill Criminalizing Armenian Genocide Denial <http://www.armenianweekly.com/2012/01/23/breaking-news-french-senate-passes-bill-criminalizing-armenian-genocide-denial>
- <sup>16</sup> Տե՛ս «Սարկոզին մտադիր է շրջանառության մեջ դնել Հայոց Ֆեղասպանության ժխտումը քրեականացնող օրենք» // <http://news.am/arm/news/103875>
- <sup>17</sup> Տե՛ս Resultats de l'election presidentielle 2012 // [www.interieur.gouv.fr/sections/a\\_votre\\_service/resultats-elections/PR2012/FE](http://www.interieur.gouv.fr/sections/a_votre_service/resultats-elections/PR2012/FE)

Գայկ Գուլյան

Аспирант института философии, социологии и права  
Национальной Академии Наук Республики Армения

## РЕЗЮМЕ

*Армяно-французское межпарламентское сотрудничество и становление договорно-правовых основ*

Сотрудничество между Арменией и Францией построено на принципе правового равенства, которое позволяет сторонам действовать более решительно, без заметного влияния международно-правовой, политической, социальной и других возможных разногласий. В статье делается вывод, что договорная база армяно-французских отношений действительна, параллельно с довольно активными межпарламентскими отношениями созданы все основания и условия для эффективного развития двустороннего политического, торгово-экономического, научно-технического и культурного сотрудничества.

**Ключевые слова:** армяно-французские отношения, сотрудничество, межгосударственные отношения, договорно-правовая основа, соглашение, парламент, делегация, официальный визит, переговоры, взаимосоглашение.

Hayk Ghoulyan

PhD student at the Philosophy, Sociology and Law Institute  
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

## SUMMARY

*Armenian-French inter-parliamentary cooperation and the establishment of contractual and legal bases*

The cooperation between Armenia and France is built on the principle of legal equality, which allows the parties to act more decisively, without significantly affecting the international legal, political, social and other possible differences. The article concludes that contractual base in the Armenian-French relationship is valid, in parallel with a fairly active inter-parliamentary relations are all grounds and conditions for the effective development of bilateral political, trade-economic, scientific-technical and cultural cooperation.

**Keywords:** Armenian-French relations, cooperation, intergovernmental relations, contractual and legal framework, agreement, parliament, delegation, official visit, conversation, reciprocal arrangement.